

ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 27/5

ք.Երևան

18 մայիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ Ա/Ձ Կարինե Ներսիսյանի դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

Ա/Ձ Կարինե Ներսիսյանը հայտնում է, որ մասնագիտությամբ մանկավարժ է, սակայն 2012թ. իր անվամբ գրանցել է Կարինե Ներսիսյան Ա/Ձ-ն, որը գտնվում է Սևան քաղաքում և հիմնականում զբաղվում է ծաղկի վաճառքով:

Ա/Ձ Կարինե Ներսիսյանի շրջանառությունը շատ փոքր է՝ տարեկան կազմում է մոտ 2.5 մլն դրամ: Հիմնադրման օրվանից Ա/Ձ Կարինե Ներսիսյանն աշխատել է շրջանառության հարկով, որի վերաբերյալ յուրաքանչյուր տարվա սկզբին համապատասխան հայտարարություն է ներկայացվել ՀՀ ԿԱ ՊԵԿ:

Ա/Ձ Կարինե Ներսիսյանը մշտապես բարեխղճորեն ներկայացրել է բոլոր հաշվետվությունները, վճարել է բոլոր հարկերը: 2018թ. փետրվար, մարտ, ապրիլ ամիսներին վճարել է ամսական շրջանառության հարկերը:

2018թ. ապրիլի 18-ին Ա/Ձ Կարինե Ներսիսյանը փորձել էլեկտրոնային տարբերակով շրջանառության հարկի վերաբերյալ եռամսյակային հաշվետվություն ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ, սակայն պատասխան է ստացել, որ ՊԵԿ-ում գրանցված է որպես ավելացված արժեքի հարկ վճարող: Այդ պահին Ա/Ձ Կարինե Ներսիսյանը հիշել է, որ ամենօրյա հոգսերի պատճառով ժամանակին հայտարարություն չի ներկայացրել շրջանառության հարկով աշխատելու վերաբերյալ:

Փաստորեն իր բացթողման պատճառով իր կամքին հակառակ հայտնվել է նման իրավիճակում՝ գրանցվել է որպես ավելացված արժեքի հարկ վճարող:

Ա/Ձ Կարինե Ներսիսյանը խնդրում է ըմբռնումով մոտենալ իր խնդրին և թույլատրել գրանցվել որպես շրջանառության հարկ վճարող:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

Ա/Ձ Կարինե Ներսիսյանը ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում պետական գրանցում է ստացել 29.06.2012թ.:

Ա/Ձ Կարինե Ներսիսյանին շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ ծանուցվել է 31.01.2017թ.:

Ա/Ձ Կարինե Ներսիսյանը զբաղվում է մանրածախ առևտրով և 2017թ. ընթացքում իրացման շրջանառությունը կազմել է 2.529.480 դրամ:

Ա/Ձ Կարինե Ներսիսյանի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել 2018թ. շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը, որի հետևանքով նա համարվել է ԱԱՀ վճարող:

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված է, որ շրջանառության հարկ վճարողներ են համարվում (անկախ բացառապես արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակներ իրականացնելու հանգամանքից) նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանը բավարարող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նուտարները (բացառությամբ նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի) հարկային տարվա ընթացքում պետական գրանցում ստացած առևտրային կազմակերպությունը կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված կամ որպես նոտար նշանակված ֆիզիկական անձը՝ համապատասխանաբար, որպես կազմակերպություն պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե հարկ վճարողը մինչև համապատասխանաբար՝ որպես կազմակերպություն պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատված ձևով հայտարարություն՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Կարինե Ներսիսյանի կողմից սահմանված կարգով և ժամկետում հարկային մարմին չի ներկայացվել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն, հետևապես 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող չի կարող համարվել:

Մինչև նույն ժամանակ ներկայացված դիմում-բողոքում չի ներկայացվել հիմնավոր փաստարկ (ապացույց)՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը սահմանված ժամկետում չներկայացնելու պատճառների վերաբերյալ:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ա/Ձ Կարինե Ներսիսյանի դիմում-բողոքը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ